Известия АН Арм. ССР, Науки о Земле, XXXII, № 6, 86—87, 1979

Ա. Ա. ԳԵՈԴԵԿՅԱՆԸ ՍՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԹՂԹԱԿԻՑ-ԱՆԴԱՄ

ՍՍՀՄ Գիտությունների ակադեմիայի օվկիանոսագիտության ինստիտուտի դիրեկտորի տեղակալ և ծովային ավազանների նավթագազաբերության լաբորատորիայի վարիչ, երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր, ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Ա. Ա. ԳԵՈԴԵԿՅԱՆԸ նավթի

Երկրաբանության և ծովային ավազանների նավթագազաբերության ուսումնասիրության ասպարեզում խոշոր գիտնական է, 127-ից ավելի գիտական աշխատությունների, այդ թվում 9 մենագրությունների և 7 գյուտարարության հեղինակ։

Ա. Ա. Գեոդեկյանը մոտ 40 տարի գիտահետազոտական աշխատանքներ է տանում նավթի և գազի երկրաբանության և երկրաքիմիայի բնագավառում։ Նա իր ինքնուրույն գործունեությունը սկսեց քառասունական թվականներին, երբ նավթի և գազի հանքավայրերի որոնման ասպարեզում սկսվեցին երկրաքիմիական մեթոդների մշակման և կիրառման ուսումնասիրությունները։ Աշխատանքները կազմակերպվեցին Արկտիկայում, Ադրբեջանում, Բաշկիրիայում, Վրաստանում և Միջին Ասիայում։ Ամփոփելով իր և ուրիշ հետազոտողների կողմից կուտակած որոնման երկրաքիմիական աշխատանքների փորձը, Ա. Ա. Գեոդեկյանը զբաղվեց երկրաքիմիական, այդ թվում հողաերկրաքիմիական մեթոդների ավելի կատարյալ համալիրների մշակմամբ։ Ա. Ա. Գեոդեկյանի տեսական մշակումները և գործնական առաջարկները մի շարք շրջաններում հիմք են ծառայել որոնողական աշխատանքներ ծավալելու համար և նպաստել՝ նավթի նոր հանքավայրերի հայտնաբերման գործին—

Ջաշթադի (Ադրբեջան), Կինդիբուլատովի (Բաշկիրիա), Պոլվանտաշ (Միջին Ասիա)։

Ա. Ա. Գեոդեկյանի իր հետազոտություններում լուսաբանել է Արևելյան Նախակովկասի մի շարք շրջանների, ամբողջովին վերցրած Կասպիական գոգավորության երկրաբանական կառուցվածքը և նավթագազաբերության հեռանկարները։

Ա. Ա. Գեոդեկյանի մեծ ծառայությունը անկասկած կայանում է ՍՍՀՄ ԳԱ օվկիանոսագիտության ինստիտուտում ծովային ավազանների նավթագազաբերության լաբորատորիայի ստեղծումը։ Նրա ղեկավարությամբ և անմիջական մասնակցությամբ իրագործվել են կարևոր ուսումնասիրություններ Կասպից, Բալթիկ, Նորվեգական, Օխոտյան և ուրիշ ծովերում։ Նա մասնակցել է ծովային ավազանների հատակի նավթագազաբերության ուսումնասիրության համար եղակի սարքավորումների գյուտարարական աշխատանքներին և ունի մի քանի հեղինակային վկայագրեր։ Նրա գիտական գործունեության համար հատկանշական է ամենահրատապ խնդիրների առաջ քաշման մեծ ունակությունը, լայն և բազմակողմանի մոտեցումը նրանց լուծման գործում։ Ա. Ա. Գեոդեկյանի և նրա աշխատակիցների հետազոտությունները, որոնք հիմնված են վերը նշված ծովային ավազանների երկրաբանական, երկրաֆիզիկական և երկրաքիմիական ամենակատարյալ համալիրային ուսումնասիրության վրա, նրան հնարավորություն տվեցին ստեղծել ծովի հատակի նավթագազաբերության գենետիկական կանխատեսման տեսական հիմքերը, որոնք ունեն կարևոր գիտական և գործնական նշանակություն։

Պետք է նշել, որ Ա. Ա. Գեոդեկյանի գիտական գործունեության համար հատկանշական է նրա հիմնական գիտա-հետազոտական աշխատանքների կապը նավթի և գազի երկրաբանության բարդ խնդիրների հետ՝ երկրի կեղևի խոշոր երկրատեկտոնական էլեմենտների կոնկրետ երկրաբանա-երկրաքիմիական առանձնահատկությունների հետ կապված նավթագազագոյացման հիմնական պրոցեսների, նավթակուտակման հիմնական զոնաների տարածական տեղաբաշխման օրինաչափությունների ուսումնասիրության հարցերի հետ։

Ա. Ա. Գեոդեկյանի օժտված լինելով գիտության կազմակերպչի տաղանդով, կատարում է նաև հսկայական գիտա-կազմակերպչական աշխատանք։ Նա հանդիսանում է ՍՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Երկրի մասին գիտության բաժնի նախագահի տեղակալ, ՍՍՀՄ ԳԱ երկրաբանության, երկրաֆիզիկայի և երկրաքիմիայի բաժնի բյուրոյի անդամ, ՍՍՀՄ ԳԱ «Սովետսկայա գեոլոգիա» և «Գեոխիմիա» ամսագրերի խմբագրական կոլեգիաների անդամ, ԲՎՀ-ի Երկրի մասին գիտության վերստուգիչ խորհրդի անդամ, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին կից նավթի գծով Ազգային Կոմիտեի երկրաբանական բաժնի անդամ, ՍՍՀՄ Երկրաբանների Ազգային կոմիտեի բյուրոյի անդամ և ՍՍՀՄ ԳԱ և ԳՏՊԿ-ի մի շարք պրոբլեմային գիտական խորհուրդների և հանձնաժողովների անդամ։

Ա. Ա. Գեոդեկյանի գիտական և պրակտիկ գործունեությունն արժանացել է ՍՍՀՄ կառավարության բարձր գնահատականի՝ նա պարգևատրվել է «Աշխատանքային Կարմիր դրոշի» երկու շքանշաններով, «Աշխատանքային արիության» երկու մեդալներով։ Տեսական ուսումնասիրությունների և նավթի նոր հանքավայրերի հայտնաբերման գործին մասնակցելու համար նրան 1974 թվին շնորհվել է «Պատվավոր նավթագործ»-ի կոչումը։